

**ՀԱՅԿ ԻՍՐԱԵԼՅԱՆ**

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի առողջապահական իրավունքի խմբի դասախոս



**ՄԱՐԴՈՒ ՈՐՈՇ ՄԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՄ  
ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՈՐԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված որոշ հանցագործությունների որակման առանձնահատկություններին: Հեղինակը ներկայացնում է նաև այդ հանցագործությունների քրեաիրավական գնահատման հետ կապված հարցերը, որոնց դիսպոզիցիաներում հեղինակի կարծիքով անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք կատարվում են հատուկ սուբյեկտների կողմից:

*Հիմնարաներ- նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիություն, բնակարանի անձեռնմխելիություն, խուզարկություն, պաշտոնական դիրք, ընտրական իրավունք:*

Ներկայացվող հոդվածում կցանկանալի ներկայացնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված ներքոհիշյալ հանցագործությունները, որոնց դիսպոզիցիաներում, իմ կարծիքով, անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ:

1. Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունը խախտելը, որը կատարվել է պաշտոնական դիրքն օգտագործելով<sup>1</sup>,

2. Բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը, որը կատարվել է պաշտոնական դիրքն օգտագործելով<sup>2</sup>,

3. Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը, որոնք կատարվել են պաշտոնական դիրքն օգտագործելով<sup>3</sup>:

Այժմ քննարկենք նշված հանցագործություններից յուրաքանչյուրի որակման առանձնահատկությունները, ինչպես նաև իրավահամեմատական վերլուծության մեթոդի կիրառմամբ համադրենք դրանց վերաբերյալ առկա մոտեցումները՝ արտասահմանյան մի շարք երկրների օրենսդրության տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 33-րդ հոդվածի 3-րդ մասի համա-

ձայն՝ «Հաղորդակցության գաղտնիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով:»:

Քրեական օրենսգիրքն իր հերթին պատասխանատվություն է նախատեսում անձանց այդ իրավունքն ապօրինի կերպով խախտելու համար և որպես ծանրացուցիչ հանգամանք՝ նախատեսում է այդ արարքի կատարումը պաշտոնական դիրքն օգտագործելով<sup>4</sup>:

Պետք է նշել, որ քրեական հետապնդման մարմնի աշխատակցի կողմից (դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատակից) անձանց այդ իրավունքի խախտումը գործնականում հնարավոր չէ, քանի որ առանց դատարանի կողմից կայացված պատշաճ որոշման կապի ծառայության մարմինը պարզապես որևէ տեղեկություն չի տրամադրի, որից կարելի է ենթադրել, որ քրեական հետապնդման մարմնի աշխատակիցը կարող է խախտել անձանց այդ իրավունքը դատարանում մտացածին և կեղծ տվյալներով միջնորդություն հարուցելու ճանապարհով:

Նշված հանցանքի համար Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքը, որպես ծանրացուցիչ հանգամանք նախատեսում է ոչ թե պաշտոնական, այլ ծառայողական դիրքն օգտագործելը<sup>5</sup>, իսկ Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքի համաձայն՝ արարքը, որը կատարվել է պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական

լիազորությունների օգտագործմամբ<sup>6</sup>:

Շվեյցարիայի քրեական օրենսգրքում որևէ ծանրացուցիչ հանգամանք, մասնավորապես անձի պաշտոնական դիրքի օգտագործում, չի նախատեսվում<sup>7</sup>:

Գերմանիայի Գաշնության քրեական օրենսգրքում խոսակցությունների գաղտնիության խախտման համար որպես ծանրացնող հանգամանք նշվում է պաշտոնատար անձ հանդիսանալը<sup>8</sup>:

Հաջորդ հանցագործությունը, որի մասին կցանկանայի խոսել, քրեական պատասխանատվություն է նախատեսում բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու համար, որի օբյեկտիվ կողմը դրսևորվում է մարդու կամքին հակառակ նրա բնակարան ապօրինի մուտք գործելով:

Սույն հանցագործության շրջանակներում կցանկանայի քննարկել, նախևառաջ, պաշտոնատար անձի կողմից մարդու բնակարանի անձեռնմխելիության խախտման հետ կապված գործողությունների կատարման կարգը՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքը որպես ծանրացուցիչ հանգամանք նախատեսում է բնակարան ապօրինի մուտք գործելը պաշտոնական դիրքի օգտագործմամբ<sup>9</sup>, այսինքն՝ տվյալ դեպքում վրա է հասնում հանցագործության կատարումը հատուկ սուբյեկտի կողմից<sup>10</sup>: Այսպես, ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքով կարող են սահմանվել դատարանի որոշմամբ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման այլ դեպքեր»: Սահմանադրական այդ նորմին համապատասխան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասը իմպերատիվ ձևով պահանջ է ներկայացնում, որ բնակարանի խուզարկությունը կատարվի միայն դատարանի որոշմամբ, այսինքն՝ քննիչի կողմից առանց դատարանի որոշման, անձի բնակարան մուտք գործելն ու խուզարկություն կատարելը ոչ միայն ապացուցողական տեսանկյունից կարծեզրկի, այլև կհանգեցնի քննիչի կողմից տվյալ անձի բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտմանը, ինչը, փաստորեն, կհամարվի քրեորեն պատժելի արարք, քանի որ քննիչն ի սկզբանե իրավունք չի ունեցել առանց դատարանի թույլտվության մուտք գործել անձի բնակարան և նրա կամքին հակառակ կատարել խուզարկություն, և այդ ամենն արվել է ապօրինի: Կոնկրետանալով

քննչական գործողություններից մեկի՝ խուզարկության, իսկ առավելապես բնակարանի խուզարկության վրա՝ կարծում ենք, որ այդ առիթով անհրաժեշտ է վերանայել ունեցած իրավական հիմքերն ու մոտեցումները՝ օրենսդիր մարմնի կողմից քրեադատավարական օրենսդրության մեջ այդ քննչական գործողության ընթացակարգի ձևափոխմամբ, քանի որ գործնականում երբեմն անհրաժեշտություն է առաջանում շտապ, առանց հապաղելու կատարել բնակարանի անհետաձգելի խուզարկություն: Նման անհրաժեշտություն կարող է առաջանալ, օրինակ, ձերբակալված կասկածյալին գիշերային ժամին (անհետաձգելի դեպքերում) հարցաքննելուց հետո ապացույցներ ձեռք բերելու նպատակով բնակարանում խուզարկության անհապաղ կատարումը, քանի որ դրա հետաձգումը կարող է հանգեցնել ապացույցների ոչնչացմանը կամ թաքցնելուն, ինչու չէ, նաև ձևափոխելուն: Գործնականում դատարանները գիշերային ժամերին չեն աշխատում ու քննիչը ստիպված լավագույն դեպքում պետք է սպասի աշխատանքային ժամի սկսվելուն, որպեսզի բնակարանի խուզարկության թույլտվություն ստանալու համար միջնորդություն ներկայացնի դատարան, անցնի դրա հետ կապված դատավարական որոշակի ընթացակարգ, որից հետո, ստանալով այդ թույլտվությունը, ձեռնամուխ լինի բնակարանի խուզարկության իրականացմանը: Այստեղ արդարացիորեն հարց է առաջանում. իսկ ի՞նչ անել այս դեպքերում: Գտնում ենք, որ քրեադատավարական օրենսդրությունը պետք է թույլ տա անհապաղ բնակարանի խուզարկություն պահանջվելու դեպքերում այն իրագործել առանց դատարանի թույլտվության:

Բնականաբար այս գաղափարի հակադրոճողներն առաջ կքաշեն իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից իրենց լիազորությունների չարաշահման խնդիրը, սակայն գտնում ենք, որ այդ հնարավոր չարաշահումները կանխելու համար կարող են նախատեսվել համապատասխան իրավական մեթոդներ ու արգելքներ, ինչպես, օրինակ, նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները և հաղորդակցության այլ ձևերը վերահսկելու համար, ինչը նույն ձևով ամրագրված է քրեական դատավարության օրենսգրքում<sup>11</sup>:

Միաժամանակ այդ նույն օրենսգրքը, սահմանելով դատարանում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման վերաբերյալ միջնորդությունների քննարկման կարգը, նախատեսում է բացառություն, այն է՝ այն դեպքերում, երբ նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման հապաղումը կարող է

հանգեցնել տեռորիստական ակտի կատարմանը, կամ հնարավոր են Հայաստանի Հանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանն սպառնացող իրադարձություններ կամ գործողություններ, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի որոշման հիման վրա թույլատրվում է նման միջոցառումների իրականացումը 48 ժամվա ընթացքում՝ այդ մասին ծանուցելով դատարանին նրան ներկայացնելով համապատասխան փաստաթղթերը: Այն դեպքերում, երբ դատարանը բավարար չի համարում օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման հիմքերը, դրա իրականացումն անմիջապես դադարեցվում է, իսկ դրա իրականացման արդյունքում ձեռք բերված տեղեկությունները և նյութերը ենթակա են անհապաղ ոչնչացման: Հակառակ դեպքում դատարանը որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու մասին<sup>12</sup>: Այս ընթացակարգը ամրագրված է նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում<sup>13</sup>: Թեպետ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինն ի վերջո 48 ժամվա ընթացքում դատարանին ներկայացնում է արդեն իսկ կատարված աշխատանքների վերաբերյալ ի սկզբանե եղած անհրաժեշտությունն ու դրա հիմնավորումները, ինչպես նաև տվյալ պահին արդեն իսկ ձեռք բերած արդյունքը, նամանավանդ որ Սահմանադրությունն այդ հարցի շուրջ ամրագրել է նման բացառություններ: Իրականում ես դեմ չեմ բացառություն նախատեսելուն, պարզապես գտնում եմ, որ այդ բացառությունը, ինչպես բերված օրինակում, այնպես էլ քրեական գործի շրջանակներում անհապաղ բնակարանի խուզարկություն կատարելու համար պետք է նախատեսել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, որով կնախատեսվի բնակարանի խուզարկության կատարում՝ առանց դատարանի թույլտվության, բայց միաժամանակ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ գլխում ամրագրված դրույթների խիստ պահպանմամբ՝ ընթերակաների, անձի և նրա ընտանիքի չափահաս անդամի, բնակարանային շահագործման կազմակերպության կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցչի, անհրաժեշտության դեպքում թարգմանչի, մասնագետի ներկայությամբ. դրանից հետո միայն անհապաղ, բայց ոչ ուշ, քան, ասենք, 24 ժամվա ընթացքում այդ մասին ծանուցել դատարանին՝ նրան ներկայացնելով կատարված խուզարկության անհրաժեշտությունը վկայող նյութերն ու փաստաթղթերը:

Եվ եթե դատարանն անհիմն կհամարի այդ խուզարկությունը, ապա այդ քննչական գործողությամբ ձեռք բերված արդյունքները կկորցնեն իրենց սպացուցողական նշանակությունը:

Նման ընթացակարգով, ըստ էության, կահմանափակվեն ու կբացառվեն հնարավոր չարաշահումները և միաժամանակ կապահովվի քրեական գործի քննության բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունը:

Բնակարանի անձեռնմխելիության խախտման վերաբերյալ Ուկրաինայի Հանրապետության քրեական օրենսգիրքը<sup>14</sup>, ինչպես նաև Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգիրքը<sup>15</sup> որպես ծանրացուցիչ հանգամանք են նախատեսում նշված հանցանքը պաշտոնատար անձի կողմից կատարելը իր ծառայողական լիազորությունների օգտագործմամբ:

Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 186-րդ հոդվածը նույնպես քրեորեն պատժելի է համարում բնակարանի անձեռնմխելիության խախտումը: Հանցանքն օբյեկտիվ կողմի դրսևորման առումով երկրնորտելի է, սակայն որևէ ծանրացուցիչ հանգամանք չունի, և չի նշվում պաշտոնատար անձի կողմից այն կատարելու մասին որևէ դրույթ:

Գ-Ղ-ը քրեական օրենսգիրքը բնակարանի անձեռնմխելիության խախտման անդրադարձել է երկու հոդվածներով՝ բնակարանի անձեռնմխելիության խախտումը և բնակարանի անձեռնմխելիության կոպիտ խախտումը, որտեղ դիսպոզիցիայից հետևում է, որ քրեորեն պատժելի է ոչ միայն բնակարան, այլև հասարակական ծառայությունների և տրանսպորտային միջոցների գտնվելու վայր ապօրինի մուտք գործելը, միաժամանակ պատասխանատվություն է նախատեսում ամբոխի կողմից հրապարակայնորեն հավաքվելու և բռնի ուժի կիրառմամբ նշված անձեռնմխելիությունը խախտելու համար: Երկու դեպքում էլ պաշտոնատար անձի կողմից այն կատարելու մասին որևէ դրույթ նշված չէ<sup>16</sup>:

Հարկ է նշել, որ բնակարանի անձեռնմխելիության խախտման հետ կապված կա ևս մեկ հիմնահարց, որը կցանկանայի ներկայացնել:

Քրեական դատավարության օրենսգրքում բնակարանն հասկացության մեջ ներառված է նաև մասնավոր կամ ծառայողական ավտոմեքենան<sup>17</sup>: Հետևաբար, ավտոմեքենայի խուզարկությունը ևս պետք է կատարվի դատարանի թույլտվությամբ: Այնինչ՝ գործնականում կարելի է ասել՝ ընդհանրապես ավտոմեքենայի խուզարկությունը չի կատարվում դատարանի թույլտվությամբ, միաժամանակ այդ նույն դատարանը ավտոմեքենայի նման ձևով

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կատարված խուզարկությանը ստացված փաստական տվյալները սովորաբար չի համարում անօրինական ճանապարհով ձեռք բերված տվյալներ: ՌԴ քրեական օրենսգիրքը նույնպես պատասխանատվություն է նախատեսում ծառայողական լիազորություններ իրականացնող անձի կողմից բնակարանի անձեռնմխելիության խախտման համար: Բայց միաժամանակ հողվածում ծանոթության կարգով պարզաբանում է «բնակարան» հասկացությունը<sup>18</sup>, որը համահունչ է ՌԴ քրեական դատավարության օրենսգրքում սահմանված «բնակարան» հասկացության հետ, որտեղ բնակարան հասկացության մեջ ընդգրկված չէ մասնավոր կամ ծառայողական ավտոմեքենան<sup>19</sup>: Կարծում ենք, որ ՌԴ օրենսդիր մարմինն առավել ճիշտ է վարվել՝ «բնակարան» հասկացությունը քրեական օրենսգրքում սահմանելով, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքում ոչ միայն չկա այդ հասկացության պարզաբանումը, այլև դրա պարզաբանման հետ կապված որևէ հղում, որպես հիմք, չի կատարվում քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հողվածին:

ՀՀ քր. օր.-ի 149-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելը, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար: Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությանը նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ, իսկ 48-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք (բացառությամբ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված,

ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք):

Ընտրությունների և հանրաքվեների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ մի շարք օրենքներով<sup>20</sup>:

Զննարկվող հանցագործության օբյեկտը ՀՀ քաղաքացիների ընտրական կամ հանրաքվեի իրավունքի և ընտրական հանձնաժողովների աշխատանքների ու ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների ազատ իրականացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրվում է հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ՝

ա. քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելով,

բ. ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելով,

գ. ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի անդամի լիազորությունների իրականացումը խոչընդոտելով,

դ. նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելով:

Խոչընդոտել նշված բոլոր դեպքերում նշանակում է ցանկացած եղանակով որոշակի արգելքներ, խոչընդոտներ ստեղծելը: Հանցակազմը ձևական է, ու հանցանքն ավարտված է համարվում նշված իրավունքների իրականացմանը ցանկացած եղանակով խոչընդոտելու պահից:

ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասում, ի թիվս այլ ծանրացուցիչ հանգամանքների, նախատեսված է նաև հանցանքի կատարումը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով: Այդ եղանակով տվյալ հանցանքի կատարումն առկա է, օրինակ, երբ դպրոցի տնօրենը, որտեղ գործելու է ընտրական հանձնաժողովը, ստեղծում է արհեստական խոչընդոտներ ընտրությունների թեկնածուի այս կամ այն վստահված անձի գործունեության համար, կամ ընտրատեղամասում իր ծառայությունն իրականացնող ոստիկանության աշխատակցի կողմից դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կու-

ասկությունների դաշինքի) լիազորված անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելով:

Քննարկվող հանցակազմի նկարագրության (դիսպոզիցիան) հետ կապված ՌԴ քրեական օրենսգիրքը որոշակիորեն այլ ձևակերպում ունի և պատասխանատվություն է նախատեսում քաղաքացիների ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելուն, քվեարկության գաղտնիության խախտման, ընտրական հանձնաժողովի, հանրաքվեի հանձնաժողովի, ինչպես նաև այդ հանձնաժողովների անդամների լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար. որպես ծանրացնող հանգամանք է նախատեսում հանցանքի կատարումը՝ ծառայողական դիրքի օգտագործմամբ, ինչպես նաև սահմանված է մեկ այլ՝ ինքնուրույն հանցակազմ, որտեղ հատուկ շեշտադրմամբ ամրագրված է գուտ պաշտոնեական և ծառայողական դիրքը օգտագործելու գործոնը և պատասխանատվություն է նախատեսվում, պաշտոնեական կամ ծառայողական դիրքը օգտագործելով, ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի՝ օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը միջամտելուն՝ նպատակ ունենալով ազդել դրանց որոշումների վրա, մասնավորապես պաշտոնատար անձի պահանջով կամ հրամանով թեկնածուների գրանցման հարցերի, թեկնածուների ցուցակների, ընտրողների ձայների հաշվարկման և այլ հարցերի հետ կապված, որոնք բացառապես հանդիսանում են ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի իրավասությունը<sup>21</sup> :

Ակնհայտ է, որ ռուսական օրենսդրությունն առավել ընդարձակ մոտեցմամբ է ամրագրել քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը՝ մանրամասն ներկայացնելով պաշտոնեական և ծառայողական դիրքի օգտագործման դրսևորումները:

Ուկրաինայի քրեական օրենսգիրքը տարանջատում է ընտրական իրավունքի և հանրաքվեի իրավունքի իրականացմանը խոչընդոտելու համար պատասխանատվությունը և նախատեսում այն առանձին, հոդվածներում<sup>22</sup>, որտեղ պատասխանատվություն է նախատեսում բռնությամբ, խաբեությամբ, սպառնալիքով, կաշառելով կամ այլ կերպ քաղաքացու ընտրելու կամ ընտրվելու ազատ իրավունքին խոչընդոտելու համար, ինչպես նաև, որպես ծանրացուցիչ հանգամանք, նախատեսում է տվյալ հանցանքի կատարումը ոչ միայն պաշտոնատար անձի կողմից իր ունեցած իշխանության կամ ծառայողական դիրքի օգտագործմամբ կատարելը, այլ նաև հանցանքը ընտրական հանձնաժողովի անդամի կողմից կատարելը: Այսինքն՝ որ-

պես ծանրացուցիչ հանգամանք, հատուկ և առանձին նշվում է նաև ընտրական հանձնաժողովի անդամի կողմից այդ հանցանքը կատարելու տարբերակը:

Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգիրքն իր մեջ ընդգրկում է թե՛ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված եղանակները և թե՛ այլ եղանակներ, ինչպես նաև ծանրացուցիչ հանգամանք է դիտում այդ հանցանքը պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների չարաշահմամբ կատարելու դեպքը<sup>23</sup> :

Շվեյցարիայի քրեական օրենսգիրքն առանձին հոդվածներով է անդրադառնում նշված հանցագործության օբյեկտիվ կողմի դրսևորումներին, որտեղ պատասխանատվություն է նախատեսվում ընտրական հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելու և քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելու համար: Սակայն Շվեյցարիայի քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվության մասով որևէ նորմ չի նախատեսում ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորված անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար: Միաժամանակ հատկանշական է, որ Շվեյցարիայի քրեական օրենսգրքի ընտրությունների արդյունքների կեղծման համար պատասխանատվության շրջանակներում որպես ծանրացնող հանգամանք նախատեսել է հանցավորի ծառայողական դիրքն օգտագործելու հանգամանքը<sup>24</sup> :

Քննարկվող հանցագործությանն է անդրադարձել նաև ԳԴՀ քրեական օրենսգիրքը, որտեղ նույնպես, որպես ծանրացուցիչ հանգամանք, չի նախատեսվում հանցանքը ծառայողական դիրքն օգտագործելու կամ պաշտոնեական լիազորությունները<sup>25</sup> չարաշահելու եղանակով կատարելու դեպքերը :

Այսպիսով, ամփոփելով մարդու վերը հիշատակված սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունները և դրանց որակման առանձնահատկությունները, գտնում են, որ

1. ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներում «պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարելը» բառերը անհրաժեշտ է փոխարինել «ծառայողական դիրքը օգտագործելով կատարելը» բառերով, քանզի վերոշարադրյալ՝ բլանկետային դիսպոզիցիա ունեցող, հանցագործու-

թյունները կարող են կատարվել նաև պաշտոնատար անձ չհամարվող պետական ծառայողների ու տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների կողմից, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպություններում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձանց կողմից. բացի այդ, եթե նշված հանցանքները կատարվում են պաշտոնեական դիրքի օգտագործմամբ, ապա յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտություն է առաջանում քննարկել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը) կիրառման անհրաժեշտությունը, այլ կերպ ասած՝ առաջանում է հանցավոր արարքն այդ հոդվածով ևս համակցության կարգով որակելու խնդիր, ուստի ամեն անգամ այդ հանցանքների կատարման դեպքում ի հայտ է գալիս նաև ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի կիրառման անհրաժեշտությունը, քանի որ, որպես կանոն, այդ հանցանքները պաշտոնատար անձանց կողմից կատարվում են՝ հենց պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայողական շահերին հակառակ օգտագործելով կամ ծառայողական պարտականությունները չկատարելով, շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով:

2. Բնակարանի խուզարկության մարտավարական իմաստն ու արդյունավետությունն ապահովելու նպատակով առաջարկում են բնակարանի անհապաղ խուզարկություն կատարելու անհրաժեշտության դեպքում կատարել այն՝ առանց նախապես դատարանի թույլտվությունը ստանալու,

բայց միաժամանակ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ գլխում ամրագրված դրույթների խիստ պահպանմամբ, որոնցում նախատեսված անձանց ներկայությամբ (ընթերականեր, անձի և նրա ընտանիքի չափահաս անդամի ներկայություն, բնակարանային շահագործման կազմակերպության կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչ, անհրաժեշտության դեպքում թարգմանիչ, մասնագետ և այլն) և դրանից հետո միայն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում այդ մասին ծանուցել դատարանին՝ ներկայացնելով կատարված խուզարկության անհրաժեշտությունը վկայող նյութերն ու փաստաթղթերը: Եվ եթե դատարանն անհիմն կհամարի այդ խուզարկությունը, ապա խուզարկության արդյունքում ձեռք բերված փաստական հանգամանքները կկորցնեն իրենց ապացուցողական նշանակությունը:

3. Ավտոմեքենայի խուզարկության օրինակականության խախտումներ թույլ չտալու և կատարվող քննության համար ընթացակարգային առումով ավելորդ ու անհարկի բարդություններ չստեղծելու համար առաջարկում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված «բնակարան» հասկացության բովանդակությունից հանել «ավտոմեքենա» բառը, իսկ ավտոմեքենայի խուզարկությունը նախատեսել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածի այլ մասով կամ մեկ այլ հոդվածով և այն իրականացնել պարզապես ավտոմեքենան տիրապետողի, տնօրինողի, օգտագործողի կամ այլ՝ գործով չշահագրգռված երրորդ անձանց և ընթերակաների մասնակցությամբ:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքը. 2003թ., հոդվ. 146, մաս 2:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքը. 2003թ., հոդվ. 147, մաս 3:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքը. 2003թ., հոդվ. 149, մաս 2, կետ 4:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքը. 2003թ., հոդվ. 146, մաս. 2:

<sup>5</sup> Տե՛ս Уголовный кодекс РФ. 1996г., ч.2, ст. 138.

<sup>6</sup> Տե՛ս Уголовный кодекс РФ. 1999г., ч.2, ст. 203:

<sup>7</sup> Տե՛ս Շվեյցարիայի Համադաշնության քրեական օրենսգրքը. 1937թ., հոդվ. 179,179.1,179.2:

<sup>8</sup> Տե՛ս Գերմանիայի դաշնության քրեական օրենսգրքը. 1998թ. խմբագրությամբ, հոդվ.201,202, 206:

<sup>9</sup> Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքը. 2003թ., հոդվ. 147, մաս 3:

<sup>10</sup> Տե՛ս Մ.Վ. Գրիգորյան. Քրեական իրավունք (ընդհանուր մաս) ուսումնական ձեռնարկ, Երևան. 2003թ., էջ 254-255:

- <sup>11</sup> Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք. 1998թ., հոդվ.239, 241:
- <sup>12</sup> Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք. 1998թ., հոդվ.284, մաս 3, 8:
- <sup>13</sup> Տե՛ս Օսլերատիվ հետախուզական գործունեության մասին ՀՀ օրենք. 2007թ., հոդվ. 32:
- <sup>14</sup> Տե՛ս Уголовный кодекс Украины. 2001г., ч.2, ст. 162.
- <sup>15</sup> Տե՛ս Уголовный кодекс РБ. 1999г., ч.2, ст. 202.
- <sup>16</sup> Տե՛ս Գերմանիայի դաշնության քրեական օրենսգիրք՝ 1998թ. խմբագրությամբ, հոդվ. 123, 124:
- <sup>17</sup> Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք. 1998թ., հոդվ.6, կետ 46:
- <sup>18</sup> Տե՛ս Уголовный кодекс РФ. 1996г., ст. 139.
- <sup>19</sup> Տե՛ս Уголовный процессуальный кодекс РФ. 2001г., п. 10, ст. 5.
- <sup>20</sup> Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգիրք. 1999թ., «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք. 2001թ., «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենք. 2002թ.:
- <sup>21</sup> Տե՛ս Уголовный кодекс РФ. 1996г., ч. 1,2,3, ст. 141.
- <sup>22</sup> Տե՛ս Уголовный кодекс Украины. 2001г., ст. 157,16..
- <sup>23</sup> Տե՛ս Уголовный кодекс РБ. 1999г., ч.1,2, ст. 191.
- <sup>24</sup> Տե՛ս Շվեյցարիայի Համադաշնության քրեական օրենսգիրք. 1937թ., հոդվ. 279, 280, 282:
- <sup>25</sup> Տե՛ս Գերմանիայի դաշնության քրեական օրենսգիրք՝ 1998թ. խմբագրությամբ, հոդվ.107,108:

*Գրականություն*

- 1. ՀՀ Սահամնադրություն. 1995թ.՝ 2015թ. կատարված փոփոխություններով:
- 2. Парога А.И. Учебник. Уголовное право России 2006г..
- 3. Серебренников А.В. Учебник. Уголовное право 2000г..
- 4. Головенков П.В. Научно практический комментарий к УК ФРГ 2003г..
- 5. Лебедев В.М. Комментарий к УК РФ 4-е издание 2005г..
- 6. Գրիգորյան Մ.Վ. Քրեական իրավունք (ընդհանուր մաս). ուսումնական ձեռնարկ, 2003թ:

**Այկ Իսրաելյան**  
Преподаватель группы медицинского права  
Ереванского государственного университета  
Им. Мхитара Гераци

**РЕЗЮМЕ**

**Особенности квалификации некоторых преступлений против конституционных прав и свобод**

Статья посвящена проблемам квалификации преступлений против некоторых конституционных прав и свобод, предусмотренных УК РА. Автор проанализировал некоторые вопросы уголовно-правовой оценки этих преступлений, в диспозициях которых, по мнению автора, необходимо произвести изменения, учитывая тот факт, что они совершаются специальными субъектами.

*Ключевые слова:* тайна переписки, телефонных переговоров, почтовых, телеграфных или иных сообщений, неприкосновенность жилища, обыск, служебное положение, избирательное право.

**Hayk Israelyan**  
Lecturer of Health Law department  
at Mkhitar Heratsi State Medical University

**SUMMARY**

**Qualifications of crimes specifications  
directed against some constitutional rights and freedoms of man**

The article is dedicated to the qualification of certain peculiarities of Criminal Code of Republic of Armenia provided for Crimes against constitutional human rights and freedoms. The author also presents the issues related to the legal assessment of the crimes of which dispositions, in author’s opinion, it is necessary to make appropriate amendments, especially considering the fact that they are carried out by special units.

*Keywords:* correspondence, telephone conversations, postal, telegraphic or other communications privacy, housing immune, search, position, the right to vote.